Արձանագրության 3

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան 03.09.2020թ.

ժամը՝ 09:30

ՆիստիցբացակայումէԱ. Համբարձումյանը,
Նիստը Նախագահում է Ռ. Փայտյանը
Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝	Ռ. Փայտյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝	Ս. Ղազարյան, Ա. Ալոյան, Մ. Մանուկյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ս. Եղիազարյան

1.Անհամապատասխանությունը շտկելու մասին

(Ռ. Փայտյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ Տ-Քնսթրաքշն ՓԲԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում չի շտկվել հայտում առկա անհամապատասխանությունը: Համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետի, եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Տ-Քնսթրաքշն ՓԲԸ-ն ծանուցվել է առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ ծանուցմանը 31.08.2020թ-ին և մինչև սույն թվականի սեպտեմբերի 1-ը պարտավոր էր շտկել անհամապատասխանությունը: Սակայն Տ-Քնսթրաքշն ՓԲԸ-ի կողմից շտկված փաստաթղթերը ներկայացվել են 02.09.2020թ-ին, ժամը 10:59-ին: Հետևաբար, համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 42-րդ կետի, եթե մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում առկա անհամապատասխանությունը, ապա հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել Տ-Քնսթրաքշն ՓԲԸ-ի հայտը և հաղթող(ընտրված) մասնակից ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

2.«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ռ. Փայտյան)

Հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցում գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
Տ-Քնսթրաքշն ՓԲԸ	Անբավարար
ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ - 0:

2.2 ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/118 ծածկագրով գնման ընթացակարգի հաղթող (ընտրված) մասնակից է ճանաչվել ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

3. Գնմանպայմանագիրկնքելուորոշումընդունելումասին

(Ռ. Փայտյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպեսնաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բակերի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել վերը նշված մասնակցին:

Ընդունվելէորոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

3.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետը հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

3.3 Անգործության ավարտից հետո ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագրի նախագիծը:

Ընդունվելէորոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Ռ. Փայտյան

Անդամներ՝ ..... Ս. Ղազարյան

..... Ա. Ալոյան

..... Մ. Մանուկյան

Քարտուղար՝ ..... Ս. Եղիազարյան